

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ՄՈՒՏՔԸ ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ (1918)

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1916 թ. վերջին, Ֆրանսիան կիպրոսում հայ կամաւորներից կազմաւորեց Հայկական (Արեւելեան) լեգէոնը։ Հայերի աջակցութեան դիմաց ֆրանսիական իշխանութիւնները խոստանում էին պատերազմից յետոյ ինքնավարութիւն տալ 1916 թ. մայիսին կնքուած Սայքս-Պիկոյի համաձայնագրով իրենց ազդեցութեան տակ անցնող հայկական տարածքներին՝ Կիլիկիային, Սեբաստիային, Խարբերդին եւ Դիարբեքիրին։

Հայկական լեգէոնը մասնակցեց Պաղեստինեան ռազմաճակատի գլխաւոր յարձակմանը, որը յայտնի է Մեգիդոյի կամ Արմագեդոնի ճակատամարտ անունով։ Այդտեղ Եգիպտոսի ռազմարշաւային զօրքերի գլխաւոր հրամանատար բրիտանական գեներալ էդմունդ Ալենբին որոշեց վճռական հարուած հասցնել թուրքգերմանական ոյժերին։ 1918 թ. սեպտեմբերի 18-ի լոյս 19-ի գիշերը սկսուեց Մեգիդոյի ճակատամարտը, որը վճռելու էր Պաղեստինեան ռազմաճակատի ճակատագիրը։ Յարձակման համար ընտրուած էր 4.30 րոպէն, երբ լուսինը չէր լուսաւորի եւ հնարաւոր կը լինէր հետեւակը հնարաւորինս մօտեցնել թշնամու դիրքերին՝ անսպասելի եւ սրընթաց գրոհի համար։ Դա թոյլ կը տար հնարաւորինս նուազեցնել զոհերի քանակը։ Առաջինը պէտք է գրոհէր 54-րդ դիվիզիան, որի մէջ էր նաեւ Փրանսիական զօրախումբը։ Նրանք յարձակման էին գնալու 10 րոպէ շուրջ 4.20։ Նրանց դիմաց լեռնային լաւ ամրացուած դիրքեր էին եւ նրանք լեռների ստորոտներից պէտք է առաջինը գնային յարձակման։ Ֆրանսիական զօրամասի կազմում գտնուող Հայկական լեգէոնը յարձակման անցաւ Ռաֆաթ-Արարայի բարձունքների շրջանում, ջախջախեց իր դէմ կանգնած գերմանա-թուրքական զօրախումբին եւ որոշակի ներդրում ունեցաւ ընդհանուր յաղթանակի գործում։

1 MASSEY W. T., *Allenby's final triumph*, London, 1920, էջ 122:

1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած այդ վճռուրոշ ճակատամարտի արդիւնքում Միջերկրականից մինչեւ Մեռեալ ծով ձգուող թուրքական Պաղեստինեան ռազմաճակատը ամբողջութեամբ քայքայուեց, իսկ «Յըլդըրըմ» բանակը ցաքուցրիւ եղաւ<sup>2</sup>:

Պաղեստինեան ռազմաճակատի գլխաւոր հրամանատար, գեներալ է. Ալենբին իր յաղթանակում հայերի մասնակցութեան առթիւ չնորհակալական հեռագրեր ուղարկեց Հայ ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուրարին եւ Եգիպտոսի հայ ազգային միութեանը: Հոկտեմբերի 12-ին Պ. Նուրարին ուղարկած հեռագրում գեներալը նշում էր: «Հպարտ եմ, որ իմ հրամանատարութեան տակ ունեմ հայկական զօրամա: Հայերը փայլուն կերպով կոռուցին եւ մեծ մասնակցութիւն ունեցան իմ յաղթանակում»<sup>3</sup>:

Իսկ Եգիպտոսի հայ ազգային միութեան ուղարկած չնորհաւորանքներին է. Ալենբին պատասխանեց: «Զերմապէս շնորհակալ եմ ձեր շնորհաւորութիւններուն համար, եւ հպարտ եմ այն իրողութեամբ, որ Արևելեան Լեգէննի ձեր հայրենակիցները գործօն բաժին մը վերցուցին կուտին մէջ, եւ մասնակից եղան մեր յաղթանակին»<sup>4</sup>: «Մարտական խաչ» շքանշանով պարզեւատրուեցին 25 լեգէոնականներ<sup>5</sup>:

Պաղեստինի եւ Միրիայի ֆրանսիական զօրախմբի հրամանատար գնդապետ Պ. դը Պիեպապը Կահիրէում ֆրանսիական դեսպան Պիեր Լեֆեւր-Պոնտալիսին սեպտեմբերի 21-ին ուղարկած նամակում գրում էր: «Արևելեան լեգէննն ի յայտ է քերել ամենամեծ խիզախութեան վկայութիւն, պահպանելով իր գրաւած դիրքերը, չնայած Արարայից տեղացող սարսափելի կրակին. այն այդտեղ կրել է զգալի կորուստներ»<sup>6</sup>:

Պ. Լեֆեւր-Պոնտալիսը սեպտեմբերի 26-ին Ֆրանսիայի ԱԳ նախարար Ստեֆան Պիշոնին ուղարկած նամակում հաւաստիաց-

2 ՊՕՅԱՀԵՍՆ Տ., Հայկական լեգէոնը: Պատմական Յուշագրութիւն, Ռուբրապուն, 1965, էջ 153:

3 Հայաստանի ազգային արխիւ, Ֆ. 200, գ. 1, գ. 131, թ. 14:

4 ՏԱ.Մ.Ս.ՏԵՍՆ Մ., Խմ Յուշերէս, Պէյրութ, 1985, էջ 123:

5 Յարութիւննեան Կ., Ֆրանսիական բանակի Հայկական լեգէոնը 1916-1920 թուականներին, Պատմա-բանասիրական հանդէս, 1999, թիւ 2-3, էջ 107:

6 ՊԵՅԼԵՐԵՍՆ Ա., Մեծ տէրութիւնները, Օսմաննեան կայսրութիւնը եւ հայերը ֆրանսիական արխիւներում (1914-1918), Երևան, 2005, հ. II, էջ 374:

նում էր, որ լեգէոնն իր արդիւնաւէտութեամբ գերազանցել է այն ջանքերը, որոնք գործադրուել էին այն կազմակերպելու համար: Դեսպանը յայտնում էր, որ բրիտանացիները մինչեւ ճակատամարտը անվստահութեամբ էին վերաբերում լեգէոնին: Դեսպանը գտնում էր, որ չնայած բրիտանացիների համեմատութեամբ իրենք երկրորդական դեր ունեն Պաղեստինեան ճակատամ, սակայն պէտք է մամուլով տեղեկացնել լեգէոնի եւ ֆրանսիական միւս զօրամասերի սխրանքների մասին, քանի որ դա քաղաքական առումով կնպաստի Ֆրանսիայի հեղինակութեան բարձրացմանը: Տեղեկացնում էր, որ ի. Ալենրին իրեն ուղարկած հեռագրով ընդունել էր ֆրանսիական զօրքերի ցուցաբերած քաջութիւնն ու անվեհերութիւնը:

**Մեպեմբերի** 29-ին Եգիպտոսի ֆրանսիական դիւանագիտական գործակալութիւնը հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը տարածեց. «Գեներալ Ալենրիի գերագոյն իրամանատարութեան ներքոյ դրուած ֆրանսիական զօրքերը Պաղեստինի յարձակման ժամանակ ցուցաբերել են ցանկացած գովեստից վեր կանգնած մեծ տոկունութիւն եւ խիզախութիւն, որոնց գլխաւոր իրամանատարը բարեհանել է մատուցել յարգանքի առանձնայատուկ տուրք: Հրաճիգների գունդը գրաւելով նրեմ մացառուտների եւ Սուրի բլուրի դիրքերը, մեկ ժամից ել պակաս ժամանակամիջոցում գերեվարել է 13 քուրք սպաների, այդ քուրք՝ մեկ իրամանատարի, 200 գերու եւ գրաւել է մեծ ժանակութեամբ գնդացիրներ: Միւս կողմից, Արեւելեան լեգէոնն ի յայտ է բերել ամենամեծ խիզախութիւն՝ պահպանելով իր դիրքերը, չնայած Արարայում տեղակայուած քուրքական մարտկոցներից տեղացող ահարկու կրակին: Սիրիական վաշտըն ի յայտ է բերել մեծ արժանիքներ՝ դիմանալով Ռաֆաքում մահ սփռող ումբակոծութեանը: Եգիպտոսում Ֆրանսիայի դիւանագիտական գործակալութիւնը հպարտ է, բանի որ կարող է հիացմունքի տուրք մատուցել հայերին ու սիրիացիներին, որոնք ֆրանսիական բանակի շարքերում ենց նոր դրսեւորել են իրենց հայրենասիրութիւնն ու ուազմական անվեհերութիւնը»<sup>7</sup>:

**Մեգիոյի** ճակատամարտից յետոյ Հայկական լեգէոնը մասնակցեց Պաղեստինի, Լիբանանի եւ Կիլիկիայի ազատագրմանը: Հայ պատմագիտութեան մէջ տեսակէտներ են արտայատուել, որ լեգէոնը մասնակցել է նաեւ Դամասկոսի եւ Հալէպի

7 Նոյն տեղում, էջ 374-375:

8 Նոյն տեղում, էջ 375:

գրաւմանը<sup>9</sup>: Մակայն մեր ուսումնասիրութիւնները ցոյց տուեցին, որ դրանք չեն համապատասխանում իրականութեանը: Հայկական լեգէոնը բրիտանական 54-րդ դիվիզիոնի հետ Միջերկրականի ափամերձ տարածքով շարժուել է դէպի Լիբանան, ապա նաւերով տեղափոխուել է Կիլիկիա:

Սեպտեմբերի 26-ին է. Ալենբին ուժերը վերադասաւորեց եւ շարժուեց դէպի հիւսիս: Թուրքերը ամբողջովին բարոյալքուել էին եւ անընդունակ էին որեւէ լուրջ դիմադրութեան: Բրիտանացիների գլխաւոր խոդիրն էր գրաւել Հալէպը: Մեծ Բրիտանիայի ռազմական խորհուրդը համոզուած էր, որ Հալէպի գրաւումից յետոյ թուրքերը կը դադարեցնեն պատերազմը: Դա էր պատճառը, որ ռազմական խորհուրդը է. Ալենբին առաջարկեց հեծելազօրի ուժերով հնարաւորինս արագ հասնել 480 կմ հեռաւորութեան վրայ գտնուող Հալէպին: Մակայն գեներալը հրաժարուեց միայն հեծելազօրի ուժերով այդքան հեռաւոր ռազմարշաւ իրականացնելուց, որի արդիւնքում երկար ճանապարհոց յոգնած հեծելազօրը ստիպուած կը լինէր բախուել Հալէպի թուրքական 25.000-ոց բանակին, որն այդ ընթացքում կարող էր թարմ ուժեր ստանալ: Ռազմական խորհրդում քննարկուեց նաեւ Ալեքսանդրետում ափհանում կատարելու եւ՝ այնտեղից դէպի Հալէպ շարժուելու նախագիծ, սակայն հաշուի առնելով Դարդանելի ափհանման ձախողուած փորձը, այն մերժուեց: Նման պայմաններում է. Ալենբին որոշեց ամբողջ զօրքով առաջանալ, որը աւելի դանդաղ, բայց ապահով կը լինէր<sup>10</sup>: Նա որպէս հեծելազօրի թիրախ ընտրեց Դամասկոսը, իսկ հետեւակի հիմնական ուժերը որոշեց ծովափով շարժել դէպի Բէյրութ եւ Տրիպոլի:

Հոկտեմբերի 1-ին բրիտանական եւ էմիր Ֆեյսալի արաբական զօրքերը կատաղի՝ մարտերից յետոյ գրաւեցին Դամասկոսը: Այնտեղ գերի յանձնուեց աւելի քան 20.000 թուրք զինուոր<sup>11</sup>: Քաղաքում եւ շրջակայքում կենտրոնացած շուրջ 30.000 հայ տարագիրներն ուրախութեամբ ընդունեցին ազատարար բանակին: Արդէն հոկտեմբերի 3-ին Անդրանիկ Կենճեանի ատենապետութեամբ կազմուեց ժամանակաւոր ազգային վարչութիւն<sup>12</sup>:

9 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Կ., Ֆրանսիական բանակի Հայկական լեգէոնը 1916-1920 քուակամներին, էջ 107:

10 MASSEY W. T., *Allenby's final triumph*, էջ 222:

11 Ibid, էջ 223:

12 ԿԵՆՃԵԱՆ Ա., Հալածականի յուշեր 1914-1918, Պէյրութ, 1964, էջ 146:

Արարայի ճակատամարտից յետոյ լեգէոնը 5 օր հանգստացաւ, ապա ծովափի երկայնքով շարժուեց հիւսիս: Չնայած ճանապարհին թշնամու այդպէս էլ չհանդիպեցին, սակայն կիզիչ արեւի տակ իրականացուող այդ երթը բաւական ծանր էր կամաւորների համար: Լեգէոնական Մինաս թափարեանը նշում է, որ նաւերով նրանց կարող էին մէկ օրում թէյրութ հասցնել, սակայն լեգէոնի հրամանատար գնդապետ Լուի Ռումիոն այդ դըժուարին ռազմերթն իրականացրեց տեղացիներին Ֆրանսիայի ուժը ցուցադրելու համար<sup>13</sup>:

Արարայից մինչեւ թէյրութ 250 կմ էր, որը լեգէոնն անցաւ մեծ զրկանքների գնով: Երկար ճանապարհը, անապատի կիզիչ արեւը, ջրի պակասը, թերի սնունդը, խսպանիական գրիպը եւ այլ զրկանքներ բաւական հիւծեցին լեգէոնականներին: Սակայն նրանց ուժ էր տալիս այն միտքը, որ ամէն մի քայլով մօտենում էին բաղձալի նպատակին՝ Կիլիկիային: Լեգէոնականներից կարապետ Թորոսեանը Արարայից մեկնելու առաջին օրուայ մասին գրում է. «Մեր խանդավառութիւնը հասած էր իր գագարնակիտին: Մենք զմեզ կը նկատէինք այն հաւատաւոր Հայերը որոնք ատենին ոչ միայն ոտքով, այլ բռպիկ ուխտի կ'երթային մեր սրբավայրերը. իրենց փափաքին իրագործումը խնդրելու Հայոց սուրբեկն»<sup>14</sup>:

Առաջին օրը լեգէոնը հասաւ Հայֆա եւ բանակեց ծովափին: Մարաւել յագեցնելու համար զինուորները ստիպուած էին ծովեզերքի մօտ աւազը փորել եւ այդ անորակ ջուրը խմել: Յաջորդ օրը լեգէոնը մտաւ Աքրուա: Յաջորդող օրերին հետզհետէ յոգնածութիւնը աւելի էր մեծանում: Օրերով ստիպուած էին սընուել բրիտանական պաքսիմատով, որը այնքան էր չորացել, որ ուտելու համար պէտք է փափկեցնէին ջրով: Սակայն այդ դըժուարութիւնները չէին կարող կոտրել հայ մարտիկների կամքը, որոնք, երկար սպասումից յետոյ, մօտենում էին հայրենիքին: Երգը, պարը, կատակները բարձրացնում էին մարտիկների ոգին: Չնգուշի երիտասարդները, որքան էլ յոգնած լինէին, երեկոյեան պարտադիր իրենց խմբապարով ոգեւորութիւն էին մտցնում<sup>15</sup>: Լեգէոնականները Եգիպտոսից դուրս գալուց յետոյ առաջին անգամ միայն Լիբանանում հանդիպեցին առատահոս սառը ջուր:

13 ԹԱԹԱՐԵԱՆ Մ., Կամաւորի մը յուշերը, Անքիլիաս, 1960, էջ 20:

14 ՊՕՅԱՃԵԱՆ Տ., Աշւ. աշխ., էջ 161:

15 Նոյն տեղում, էջ 161-162:

**Առաջխաղացման ընթացքում բրիտանական զօրամասերի գինուորների 40-60%-ը վարակուեցին մալարիայով եւ իսպանական դրիպով:** Այդ համաճարակները նրանց փոխանցուեցին թուրքական բանակից: Արդէն Հայֆայում պարզ դարձաւ, որ իսպանական դրիպի համաճարակը հասել էր նաեւ Հայկական լեգէոնին:

**Լեգէոնի լեյտենանու Վահան Փորթուգալեանը դրում է.** «Այդ յառաջխաղացման ընթացքին անտեսանելի թշնամի մը բանակը կազմակուծման վտանգի ենթարկեց: Խորհրդաւոր համանարակ մը: Ամէն օր զինուորներ, տասնեակներով, ջերմէ կը բռնուէին, բայց այլ ախտանիշներով, ու կ'յենային՝ քաղելու անկարող: Երբեմն մահով կը կնքուէր հիւանդութիւնը, որուն դարման չէին գտներ թժիշկներ: Շատ ուշ, խաղաղութենէն ետքը, հասկցուեցաւ թէ կոիփ եսպանուի համանարակն էր, որ ըստ վիճակագրութեանց, աւելի զոհեր տարաւ աշխարհի մէջ քան չորս տարուան պատերազմը»<sup>16</sup>:

**Լեգէոնի թժիշկը յուսադրեց մարտիկներին նրանով,** որ հայեր լայնակուրծք էին եւ կարող էին յաղթահարել այդ հիւանդութիւնը: **Մօտ 800** հայ զինուորներ հիւանդացան իսպանական դրիպով, որոնցից 6-ը մահացան<sup>17</sup>:

Համաճարակի դէմ պայքարելու համար չկային դեղորայք, պայմաններ, թժիշկներ: Հիւանդներին, որպէս բուժում, կերակրում էին սոխի ու լոլիկի աղցանով, որը որոշ չափով նպաստում էր ապաքինմանը: Քայլելու անընդունակ հիւանդ զինուորները երկար ժամանակ անխնամ մնում էին ճանապարհներին, քանի որ բաւարար փոխադրամիջոցներ չկային: Դրան գումարում էր ֆրանսիացի որոշ թժիշկների ցուցաբերած անտարբերութիւնը: Հայֆայում մնացած հիւանդ լեգէոնականները հոկտեմբերի վերջին մեկնեցին Բէյրութ: Քայլելու անընդունակները՝ նաւով, իսկ չուրջ 150-ը՝ ոտքով<sup>18</sup>:

**Բէյրութի ազատագրումն իրականացուեց հայկական զօրախմբի ուժերով** եւ առանց մարտերի: Դեռեւս սեպտեմբերի 30-ին թուրքերն ու գերմանացիները հեռացան քաղաքից, նախապէս ուշնչացնելով մննդի պաշարները: Քաղաքում առանց այդ էլ սովէ էր տիրում եւ պատերազմի տարիներին տեղի բնակչութեան գըրեթէ կէսը սովամահ էր եղել: Փատորէն, Բէյրութի բնակչութիւնը կանգնեց ամբողջական ոչնչացման եղրին<sup>19</sup>:

16 Նոյն տեղում, էջ 165:

17 Նոյն տեղում, էջ 163:

18 Նոյն տեղում, էջ 165-167:

19 MASSEY W. T., *Allenby's final triumph*, էջ 283:

Կիպրոսի ռազմաբազայում մնացած Հայկական լեգէոնի Գ գումարտակը սեպտեմբերի 29-ին ֆամագուտայից բրիտանական «Պըրկըն» նաւով մեկնեց ռազմաճակատ: Յաջորդ օրը նրանց տեղափոխող նաւը կանգ առաւ Հայֆայի նաւահանգստի մօտ: Հոկտեմբերի 1-ին Հայ եւ սիրիացի զինուորները ափ դուրս եկան Բէյրութի նաւահանգստում: Տեղի բնակչութիւնը խանդավառութեամբ ընդունեց ազատարար զինուորներին՝ նրանց ճանապարհը պատելով ծաղիկներով: Հայ զինուորները հաստատուեցին զօրանոցի վերածուած Ֆրանսիական համալսարանի շէնքում: Սպայակոյտը տեղաւորուեց շէնքում, իսկ զինուորների համար վրաններ խփուեցին բակում: Նաւի բեռնաթափումն աւարտուեց միայն Հոկտեմբերի 3-ին<sup>20</sup>:

Հոկտեմբերի 7-ին, երբ բրիտանական հետախուզական ուժերը հասան Բէյրութ՝ զարմանքով պարզեցին, որ այն արդէն ազատագրուած է<sup>21</sup>: Ինչպէս տեսնում ենք, կիպրոսից ժամանած հայկական լեգէոնի Գ գումարտակը դաշնակցային առաջին զօրախումբն էր, որը ոտք դրեց Բէյրութ:

Հոկտեմբերի 10-ին Բէյրութ հասան Պաղեստինից ոտքով եկած Հայկական լեգէոնի նաեւ Ա եւ Բ գումարտակները: Նրանք չափազանց յոդնած էին երկարատեւ ճանապարհից, զգալի մասը հիւանդ էր: Դա բաւական տիրուր տպաւորութիւն թողեց Գ գումարտակի զինուորների վրայ, ովքեր ոգեւորութեամբ դուրս էին եկել դիմաւորելու յաղթական ճակատամարտում իրենց փայլուն դրսեւորած զէնքի ընկերներին: Բէյրութի բոլոր գլխաւոր կէտերի վերահսկողութիւնը անցաւ Հայ զինուորներին<sup>22</sup>:

Սկզբում լեգէոնականները ճաշում էին բացօթեայ: Բէյրութում այդ ժամանակ սով էր եւ բնակչութիւնը հաց էր մուրում զինուորներից: Հայ կամաւորները իրենց հացը բաժանում էին սովեալ երեխաններին: Այդ մասին տեղեկանալով հրամանատարութիւնը արգելեց բացօթեայ ճաշելը: Բրիտանական նաւերը մէկ շաբաթ անց քաղաք հասցրին անունդ, հագուստ, դեղորայք եւ այլ անհրաժեշտ ապրանքներ, որով զինուորների եւ բնակչութեան վիճակը բարելաւուեց<sup>23</sup>:

20 ԱՃԷՄԵԱՆ Խ., էջեր կամաւորի օրագրէս, Պէյրուք, 1967, էջ 132-138:

21 GULLETT H. S., *The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918 (10th edition)*, Sydney, 1941, էջ 776-777:

22 ԱՃԷՄԵԱՆ Խ., Աշւ. աշխ., էջ 140-141:

23 ՊՕՑԱՃԵԱՆ Տ., Աշւ. աշխ., էջ 164:

**Արարայից Բէյլութ գնալիս հայ լեգէոնականները ճանապարհին անընդհատ հանդիպում էին հայ տարագիրների մնացորդներին: Վերջիններս մեծ յուզմունք եւ ոգեւորութիւն էին ապրում յաղթական բանակի շարքում տեսնելով հայ գինուորների:**

**Լեգէոնական կ. Թորոսեանը գրում է. «Մօտ 10 օր ճամբորդած էինք: Իրիկուն մը կանգ առինք բլուրի մը ստորոտը գիշերեկու համար. զրադած էինք կարգադրութիւններով, երբ տեսանք որ բլուրին գագաթը մարդ մը կանգնած՝ մեզ կը դիտէր: Խմբապետ Արեւեան, որ մեր ամենաշատ սիրուած պաշտօնեան էր, հայերէն հրամաններ կարակէր վրանիս պոռալով: Յանկարծ տեսանք որ բլուրի վրայի մարդը աղադակ մը փրցնելով սկսաւ վագել դէպի մեզ: Մենք գործերնիս քողուցինք տեսնելու համար թէ ինչ կը պատահի: Երբ ան մօտեցաւ մեզի, կանգ առաւ, դիտեց մեզ ու հայերէն ըսաւ. «Զեր դէմքէն կը հասկնամ որ դուք Հայ էք»: «Շիտակ ես, ըսինք, բոլորս ալ հայ ենք»: Այս խօսքին վրայ ան գրկեց զինուոր մը ու համբուրեց, յետոյ ուրիշ մը եւ ուրիշ մը: Մարդը ուրախութենէն բարձրաձայն կը խնդար ու միեւնոյն ատեն առատ արցունքի կարիլներ կը գլորուէին անոր խորշումած այտերէն վար: Մեր հարցումներուն պատասխաննելով ըսաւ որ մօտակայ արար գիւղ մը կը բնակէր. այնտեղ ոչինչ ուներ բայց միայն մէկ արօտավար կորեկ եւ ըսաւ. «Գետինն անցնի իրենց կորեկը. ես այլեւս ձեզմէ չեմ բաժնուիր»: Ասոր նման 15-20 Հայեր, մեծաւ մասամբ կիններ ու անշափահասներ գտնուեցան ու հետեւեցան բանակին»<sup>24</sup>:**

**Լեգէոնի սպաներից Վահան Փորթուգալեանը գրում է. «Կը պատահէինք երբեմն հայ տարագիր բեկորներու, բոլորը ցնցոտիներու մէջ, լուռ, արցունքը իրենց աչքերուն մէջ՝ թերահաւատութեամբ կը դիտէին ազատարար դաշնակից բանակին անցքը: Օր մը, կ'անցնէինք գիւղէ մը, ուր կանգ առինք հանգիստի համար: Լեգէոնականները շարժեցան ըստ զինուորական հրամաններուն, որոնք կը տըրուէին ֆրանսերէն: Մէկը կանչեցի եւ հրահանգ մը տուի, հայերէն, բարձրաձայն, աի նստած ըլլալով: Իրարանցում մը տիրեց հանդիսաւ տեսներուն մէջ: «Հա՛յ են Հա՛յ են» կը բացականչէին, կարծես հըրաշքի մը առջև: Ուրիշ օր մը, գնդապետ Ռոմիեոյի հրամանով, ժանի մը ձիաւոր լեգէոնականներ հետս առնելով, գացինք Արարի մը տունէն փրկել հայ աղջնակ մը, ինչ որ կատարուեցաւ, երկար բանակցութիւններէ ետքը, փափկանկատութեամբ, որովհետեւ Արարը բարի մարդ մըն էր»<sup>25</sup>:**

24 Նոյն տեղում, էջ 162-163:

25 Նոյն տեղում, էջ 164-165:

Բէյրութում հայ զինուորները հանդիպեցին հազարաւոր գաղթական հայերի, որոնք չափազանց թշուառ վիճակում էին: Տարագիրները, մոռանալով իրենց ծանր վիճակը, մեծ ցնծութիւն ապրեցին յաղթող բանակի շարքում տեսնելով հայ կամաւորներին<sup>26</sup>: Բէյրութի հայերը մեծ ուրախութեամբ դիմաւորեցին հայ զինուորներին, ամէն կերպ փորձում էին պատուել, հիւրասիրել, օժանդակել նրանց<sup>27</sup>:

Գեներալ է. Ալենբին որոշեց Հալէպին մօտենալ երեք փուլերով: Գրաւել լիբանանեան Ռայակ քաղաքը, յետոյ Հոմսը, ապա գրոհել Հալէպը<sup>28</sup>: Ռայակը գտնուում էր Դամասկոսից 65 կմ հեռաւորութեան վրայ: Այն տրանսպորտային հանգոյց էր, ունէր խոշոր օդանաւակյան, այստեղ էին թուրքական հիմնական պահեստները, գերմանական ու թուրքական բաւական մեծ ուժեր էին կենտրոնացուած: Հոկտեմբերի 6-ին բրիտանական զօրքերը մտան Ռայակ: Թուրքերը առանց դիմադրութեան, մէկ օր առաջ հեռացել էին քաղաքից՝ այրելով իրենց 32 ինքնաթիւները<sup>29</sup>: Հոկտեմբերի 15-ին բրիտանական զօրքերը մտան Հոմս: Այստեղ եւս թուրքերը առանց որեւէ դիմադրութեան նահանջեցին<sup>30</sup>: Հոկտեմբերի 19-ին բրիտանական զօրքերը շարունակեցին յաղթարշաւը Հոմսից հիւսիս: Հոկտեմբերի 21-ին բրիտանական օդուժը ուժակոծեց Համա քաղաքը: Յաջորդ օրը թուրքերը նահանջեցին նաեւ Համայից<sup>31</sup>:

Ալենբին որոշեց Հալէպը գրաւել հոկտեմբերի 26-ին: Նոյն օրը սպասում էր, որ ֆրանսիական նաւատորմը ափհանում կը կատարէր Ալեքսանդրետում: Ֆրանսիացիները ցանկանում էին գրաւել Ալեքսանդրետը եւ Փարիզից հրահանգեցին Սիրիայի ֆրանսիական նաւատորմի հրամանատար, ծովակալ Վարնեյին, որպէսզի գրաւէր այդ նաւահանգիստը: Հոկտեմբերի 15-ին Բէյրութում Վարնեյը այդ խնդրի մասին տեղեկացրեց Ալենբիին: Նա տուեց իր համաձայնութիւնը, որ Ալեքսանդրետը գրաւուի ֆրանսիական եւ հայկական զօրքերի միջոցով: Սակայն թուրքերը նոր համալրումներ ստացան, ականապատեցին Ալեքսանդրետի

26 Թ.Ա.Թ.Ա.ՐԵՍԱՆ Մ., Յշւ. աշխ., էջ 20-21:

27 Ա.ՃԵՄԵՍԱՆ Խ., Յշւ. աշխ., էջ 142:

28 MASSEY W. T., *Allenby's final triumph*, էջ 289:

29 CUTLACK F. M., *The Australian Flying Corps in the western and eastern theatres of war 1914-1918*, Sydney, 1941, էջ 169:

30 MASSEY W. T., *Allenby's final triumph*, էջ 299:

31 Ibid, էջ 302:

ծովածոցը եւ հրետանային կրակով հետ մղեցին Փրանսիական նաւատորմին<sup>32</sup>: Արդիւնքում Ալեքսանդրետի գրաւումը մէկ ամսով յետաձգուեց:

Հոկտեմբերի 23-ին բրիտանական առաջապահ զօրքերը մօտեցան Հալէպին: 5-րդ հեծելազօրային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Հ. Մականդրիւն առաւօտեան ժամը 10-ին պատուիրակ ուղարկեց քաղաք՝ պահանջելով յանձնուել առանց դիմադրութեան: Թուրքերը միայն ժամը 5-ին պատասխանեցին՝ մերժումով: Հ. Մականդրիւն որոշեց դիրքաւորուել եւ սպասել հիմնական ուժերի ժամանմանը, որոնք պէտք է հասնէին հոկտեմբերի 25-ին: Արաբական զօրքերը էմիր Նասիրի գլխաւորութեամբ հոկտեմբերի 25-ին մօտեցան քաղաքին եւ նրանց մի մասը գիշերով մտաւ Հալէպ, ուր ապստամբութեան պատրաստ մեծ թուով արաբներ կային: Հոկտեմբերի 26-ի առաւօտեան ժամը 6-ին սկսուեց բրիտանական եւ արաբական զօրքերի գրոհը: Թուրքերը որոշ դիմադրութիւնից յետոյ ստիպուած էին յանձնել Հալէպը<sup>33</sup>:

Ինչպէս եւ սպասում էր, Հալէպի անկումից յետոյ թուրքերը ստիպուած էին հաշտութիւն խնդրել: Հոկտեմբերի 31-ին կնքուած Մուղրոսի զինադադարով ռազմական գործողութիւնները դադարեցին: Մինչ այդ բրիտանական ուժերին յաջողուել էր գրեթէ ամբողջութեամբ ոչնչացնել Պաղեստինում, Լիբանանում եւ Սիրիայում կենտրոնացուած թուրքական բանակները: Թուրքերը տուեցին հսկայական թուով զոհեր ու գերիներ: Սեպտեմբերի 19-ից մինչեւ զինադադարի կնքումը բրիտանացիների ձեռքն ընկաւ 75.000 գերի, այդ թւում՝ 3.700 գերմանացի ու աւստրիացի, 360 հրանօթ, 800 գնդացիր, 210 բեռնատար եւ 50 մարդատար մեքենայ, 90 շոգեքարչ, 470 փաղոն, 3.700 բեռնակիր անասուն եւ այլ ռազմավար<sup>34</sup>:

1918 թ. հոկտեմբերին Պաղեստինի եւ Սիրիայի Փրանսիական զօրախումբը վերակազմաւորուեց եւ անուանակոչուեց Արեւելքի Փրանսիական զօրախումբ, որի հրամանատար նշանակուեց Համըլենը: Հայկական լեգէոնը մտաւ նրա կազմի մէջ<sup>35</sup>:

32 Ibid, էջ 302-303:

33 Ibid, էջ 307-309:

34 GULLETT H. S., The Australian Imperial Force in Sinai and Palestine, էջ 783:

35 Լ.Ս.ԶԵՍՆ Գ., Աշխ. աշխ., էջ 192:

ինչպէս տեսանք, Բէյրութը ազատագրուել էր Հայկական լեգէոնի ուժերով։ Սակայն բրիտանացիները փորձում էին տարածաշրջանում իրենց ազդեցութիւնը հաստատել եւ ցոյց տալ ֆրանսիայի երկրորդական դերը։ Հետզհետէ Բէյրութի ռազմավարական կէտերի վերահսկողութիւնը անցաւ բրիտանական զօրամասերին, իսկ Հայկական լեգէոնը իրականացնում էր պահակային եւ պարեկային ծառայութիւն<sup>36</sup>։

Նոյեմբերի 18-ին Բէյրութում ցաւալի միջաղէպ տեղի ունեցաւ։ Քաղաքում զբունող հայ լեգէոնականների հետ ընդհարուեցին տեղական սստիկաններն ու էմիր Ֆեյսալի զինուորները<sup>37</sup>։ Դա արաբների կողմից ֆրանսիացիների դէմ կազմակերպուած սադրանք էր, քանի որ էմիրը ցանկանում էր Սիրիան ու Լիբանանը դարձնել արաբական անկախ պետութեան մաս։

Դէպքից մի քանի օր առաջ ֆրանսիական հրամանատարութիւնը տեղեկութիւն էր ստացել արաբների կողմից նախապատրաստուող զինուած գործողութեան մասին։ Դրանով պայմանաւորուած՝ քաղաքի պահակակէտերում զինուորների քանակը մեծացուեց, նրանց տրուեց բաւարար զինամթերք։ Դէպքը տեղի ունեցաւ հետեւեալ պայմաններում։ Լեգէոնականները գնում կատարելուց վճարեցին ֆրանսիական ֆրանկով, քանի որ աշխատավարձը դրանով էին ստանում, սակայն շրջիկ առեւտրականը պահանջեց թուրքական լիրա եւ զինուորների տուած թղթադրամը արհամարհանքով։ ցուցադրաբար գետին նետեց։ Դրանից վիճաբանութիւն ծագեց։ Մօտերքում գտնուող տեղացի սստիկանը, մօտենալու եւ վիճաբանութիւնը դադարեցնել փորձելու փոխարէն, ատրճանակով մի քանի անգամ օդ կրակեց, որը ազդանշան հանդիսացաւ, որպէսզի անմիջապէս զանազան կողմերից մի քանի տասնեակ զինուած մահմեդականներ դուրս գան եւ յարձակուեն անզէն լեգէոնականների վրայ։ Հայ զինուորներից մալաթիացի Աբրահամ Աբրահամեանը սպանուեց, իսկ պանտրմացի Յակոբը վիրաւորուեց։ Մօտակայ պահակակէտի հայ լեգէոնականները անմիջապէս օգնութեան հասան եւ կրակ բացեցին զինեալների ուղղութեամբ։ Խոլովարարները փախուստի դիմեցին, իրենց հետ տանելով մօտ երկու տասնեակ սպանուածներին եւ վիրաւորներին։ Ֆրանսիացի սպանները հայ լեգէոնականներին յորդորեցին նոր քայլեր չձեռնարկել վրէժ լուծելու համար։ Հայ

36 ՊՕԹԱՃԵԱՆ Տ., Աշւ. աշխ., էջ 168:

37 Լ.Ս.ԶԵԱՆ Գ., Աշւ. աշխ., էջ 192:

մարտիկները տուած փայլուն հակահարուածով արդէն բաւարարուել էին եւ նոր գործողութեան չին ձգտում: Յաջորդ օրը արաբները իրենց սպանուածների դիակները սայլերով բերեցին Բէյրութի կառավարչատուն եւ փորձեցին ներս մտնել, սակայն փոքրաթիւ հայ պահակները կարողացան ցրել այդ սակրիչներին<sup>38</sup>:

Այդ դէպքից յետոյ մօտ քսան օրով Գ գումարտակի հայ զինուորներին ուղարկեցին Լեռնային Լիբանան, որպէսզի կրքերը հանդարտուեն եւ նոր ընդհարումներ չինեն<sup>39</sup>: Զօրամասը հաստատուեց Բէյրութից մօտ 15-18 կմ հեռաւորութեան վրայ գըտնուող Զունէա ծովեզրեայ աւանում՝ մինչեւ Կիլիկիա տեղափոխուելը: Մի մասը հաստատուեց տեղի վարժարանի շնչքում, մընացածը գետի ափին վրաններ խփեցին<sup>40</sup>: Լեգէոնականները Զունէայից այցելութեան գնացին Զմմառի հայ կաթոլիկական վանքը: Վանականները նուազախմբով եւ ճոխ հիւրասիրութեամբ դիմաւորեցին հայ զինուորներին<sup>41</sup>:

Պէտք է նշել, որ Սիրիայում, Լիբանանում, Միջազետքում գտնուող հայ գաղթականութեան եւ բրիտանացիների կողմից գերուած թուրքական բանակի հայ ռազմագերիների մէջ մեծ էր Հայկական լեգէոնին միանալու ձգտումը:

Բէյրութում մեծ թուով դիմումներ եղան կամաւորագըրուելու Հայկական լեգէոնին եւ այնտեղ 800 հայ կամաւորներից կազմաւորուեց Դ գումարտակը<sup>42</sup>: Դրանք հիմնականում թուրքական բանակի գերուած հայ զինուորներն էին<sup>43</sup>:

Պարեստինի եւ Սիրիայի ֆրանսիական գլխաւոր կոմիսար Ժորժ Պիկոն Բէյրութում Ռուբէն Հերեանին տեղեկացրեց, որ նախատեսւում է հայկական զօրքի թիւը հասցնել 20.000-ի: Դա բաւական ոգեւորեց հայերին: Հալէպից մօտ 800 երիտասարդներ Ռ. Հերեանի գլխաւորութեամբ ոտքով հասան Աղանա, որպէսզի զինուորագրուեն Հայկական լեգէոնին, սակայն ֆրանսիական հրամանատարութիւնը մերժեց: Գնդապետ Լ. Ռոմիոն ամէն

38 ԱՃԵՄԵԱՆ Խ., Յշ. աշխ., էջ 151-154:

39 ԹԱԹԱՐԵԱՆ Մ., Յշ. աշխ., էջ 21:

40 ՊՕՑԱՃԵԱՆ Տ., Յշ. աշխ., էջ 170:

41 ԱՃԵՄԵԱՆ Խ., Յշ. աշխ., էջ 159:

42 ԱՄՊԻՒՐԵԱՆ Ա., Հայ Դատը: Հայ ժողովրդի ազատագրական նիգերը, Թեհրան, 1977, էջ 157:

43 ԱՃԵՄԵԱՆ Խ., Յշ. աշխ., էջ 142:

կերպ խոչընդոտում էր հայկական զօրամասի մեծացմանը: Նա հետզհետէ սկսել էր լաւ յարաբերութիւններ հաստատել թուրքերի հետ<sup>44</sup>:

Դամասկոսում՝ Արեւելեան լեգէոնին միանալու համար զինուորագրուեցին 900 հայեր: Հոկտեմբերի 26-ին տեղի հայոց եկեղեցում նրանց օրհնեց կիլիկիայի Սահակ Բ Խապայեան կաթողիկոսը: Հոկտեմբերի 27-ին կամաւորները Դամասկոսից մեկնեցին Բէյրութ, որպէսզի մասնակցեն հայրենիքի ազատագրմանը<sup>45</sup>: Կ. Պոլսից կիլիկիա եկան 600 կամաւորներ, սակայն նրանց եւս շընդգրկեցին լեգէոնի մէջ: Բազմաթիւ էին նաեւ այլ վայրերից զինուորագրուել ցանկացող հայերի մերժուած դիմումները<sup>46</sup>:

Բէյրութից լեգէոնի մի մասը երկօրեայ արշաւի մեկնեց Լիբանանի Քըսըրուանի շրջան: Այնտեղ՝ Անթուրայի վաճքում, լեգէոնականները հանդիպեցին 500 հայ որբերի: Թուրքերը փորձել էին հաւատափոխ ու ազգափոխ անել նրանց՝ թուրքացնել: Հարիւրաւոր երեխաններ սպանուել էին, իսկ միւսները սովի ու մշտական վախի մէջ էին ապրել: Հայերէն խօսելը, իրենց հայկական անունները յիշելը արգելուել էր: Մանուկները խանդապառուած ընդառաջ վազեցին հայ զինուորներին եւ հանդիպումը շատ յուզումնալից էր: Պարտիզակցի մի մանչուկ լեգէոնականներին ասաց. «Դուք գացէք, թուրքերը բոլորն ալ սատկեցուցէք, որ մենք ազատինք: Մենք պիտի մեծնանք, ու ձեր սա աղուորիկ լաքերը պիտի հազնինք, ...զինուոր ըլլանք. այն ատեն դուք հանգիստ կ'ընէք ու մենք կ'երթանք թշնամիին դէմ...»<sup>47</sup>:

Երբ արդէն ակնյայտ էր պատերազմում թուրքիայի պարտութիւնը, հայ գործիչները անհրաժեշտ քայլեր ձեռնարկեցին պաշտպանելու հայութեան շահերը հաշտութեան բանակցութիւններում: Հոկտեմբերի 8-ին Հայ ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուբարը դաշնակիցներին յուշագիր ներկայացրեց, ուր պահանջում էր, որպէսզի զինադադարի պայմանների մէջ մտցուեն հետեւեալ յօդուածները. 1. Տեղահանուած եւ գաղթական հայերի վերադարձը հայրենիք դաշնակից գօրքերի պաշտպանութեան ներքոյ եւ հայկական վեց նահանգների ու կիլիկիայի բոլոր ռազմական կէտերի գոաւում: 2. Արգելել Օսմա-

44 ՊՕՅԱՃԵՍԱՆ Տ., Յշւ. աշխ., էջ 221-222:

45 Կէնձնեան Ա., Հայածակամի յուշեր 1914-1918, Պէյրութ, 1964, էջ 155:

46 ՊՕՅԱՃԵՍԱՆ Տ., Յշւ. աշխ., էջ 226:

47 ՊԱՐԹԵՒԵՍԱՆ Ա., Արարա: Հայկական լեգէոնը, Խոմիք, 1919, էջ 106:

նեան կառավարութեանը կազմակերպել թուրքերի ներգաղթ այդ նահանգների մէջ: Յ. Դաշնակից բանակների կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սովահար հայ բնակչութեան գոյութիւնը ապահովելու եւ երկիրը վարչականօրէն կազմակերպելու համար<sup>48</sup>:

Հոկտեմբերի 29-ին Պ. Նուբարը պաշտօնապէս դիմեց Անտանտի երկրներին, որպէսզի հայերին ճանաչեն պատերազմող կողմ<sup>49</sup>: Դա միջազգային իրաւունքի տեսանկիւնից կատարուած ճիշտ եւ խորապէս մտածուած քայլ էր: Նա լաւ էր պատկերացնում միջազգային այն չափանիշները, որոնցով միջազգային իրաւունքի սուբյեկտ էին ճանաչում ոչ միայն ինքնիշխան (սուվերեն) պետութիւնները, այլեւ՝ ազգային-ազատագրական շարժումները՝ յանձին իրենց ղեկավար մարմինների: Այդպիսին կարող էր ճանաչուել Ազգային պատուիրակութիւնը կամ փաստացի գոյութիւն ունեցող Հայաստանի Հանրապետութիւնը, որը ղեռեւը միջազգայնօրէն ճանաչուած պետութիւն չէր: Այսպիսով՝ որպէս միջազգային իրաւունքի սուբյեկտ ճանդէս գալու համար անհրաժեշտ էր, որ հայերը ճանաչուէին պատերազմող կողմ: Նաեւ այդ հեռանկարի համար էր, որ Պ. Նուբարն աջակցեց կամաւրական շարժմանը եւ Հայկական լեգէոնի կազմաւորմանը:

Հոկտեմբերի 25-ին նախարար Ստեֆան Պիշոնին ուղարկած զեկուցագրում Ֆրանսիայի ԱԳՆ Արեւելքի վարչութեան պէտ ժան Գուն տեղեկացնում էր, որ հայ ազգային պատուիրակութեան նախագահը պահանջել է հայերին ճանաչել պատերազմող կողմ: Նշում էր, որ նոյնանման դիմումներ ուղարկուել են նաեւ Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի կառավարութիւններին: Ժ. Գուն Արեւելեան լեգէոնը եւ Կովկասից Պարսկաստան տեղափոխուած եւ բրիտանացիների հետ համագործակցող հայկական ուժերին համարում էր պատերազմող կողմ: Նա առաջարկում էր Պ. Նուբարին պատասխանել, որ Ֆրանսիան պատրաստ է հայերին ճանաչել պատերազմող կողմ, եթէ դա անեն նաեւ միւս դաշնակիցները: Միաժամանակ, առաջարկում էր Սիրիայում Փրանսիական զօրքերի հրամանատարին հրահանգել, որպէսզի Արեւելեան լեգէոնին տրամադրեն հայկական դրօշներ, որը ցոյց կը տար հայերի ինքնավար գոյութեան իրաւունքի ճանաչումը<sup>50</sup>:

48 ՀԱ.Ա., ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 15:

49 ԱՃԵՄԵԱՆ Լ., Եգիպտահայ տարեցոյց 1925, Աղեքսանդրիա, 1924, էջ 87:

50 ՊԵՅԼԵՐԵԱՆ Ա., նշ. աշխ., հ. II, էջ 399:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսում ստորագրուած զինադադարով թուրքերն անձնատութեան ենթարկուեցին: Միքանի յօդուածներ անմիջականօրէն առնչում էին հայկական շահերի հետ:

**Յօդուած 4.** Բոլոր դաշնակցային ռազմագերիները, բոլոր հայ ռազմագերիները եւ ներկալուածները պէտք է ժողովուեն կ. Պոլսում, որպէսզի առանց որեւէ պայմանների յանձնուեն դաշնակիցներին:

**Յօդուած 11.** ... Թուրքական զօրքերն արդէն ստացել են Անդրկովկասի մի մասը էվակուացնելու հրաման, ընդ որում մնացած զօրքերը կը հեռացուեն, եթէ տեղերում իրադրութիւնը ուսումնասիրելուց յետոյ դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ:

**Յօդուած 16.** ... Թուրքական զօրքերի դուրս բերումը Կիլիկիայից:

**Յօդուած 24.** Հայկական վիլայեթներից (որեւէ) մէկում անկարգութիւններ ծագելու դէպքում, դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրաւելու իրաւունքը:

Փաստօրէն, Մուղրոսի զինադադարով Հայաստանի մեծ մասը թողնուում էր թուրքական զօրքերի վերահսկողութեան տակ, որը հետագայում յանգեցրեց Հայկական հարցի ծախողմանը: Զինադադարի պայմաններից դրական էր Կիլիկիայից թուրքական զօրքերի հեռացման պահանջը:

Հոկտեմբերի 31-ին ստորագրուած լրացուցիչ համաձայնագիրը ճշտում էր Կիլիկիան դաշնակիցներին յանձնելու ժամանակացոյցը:

1. Դաշնակիցները պէտք է գրաւեն այն բոլոր տարածքները, որոնք իրենց համար ռազմական արժէք ունեն եւ իրենց անվտանգութիւնն են երաշխաւորում:

2. Թուրքական զօրքերի նահանջը Կիլիկիայից պէտք է տեղի ունենար հետեւեալ թուականներին. դեկտեմբերի 13-ին՝ Զիհան գետից արեւելք գտնուող տարածքներից, դեկտեմբերի 17-ին՝ Սիհուն գետից արեւելք եւ Աղանա-Տարսոն գծից հարաւընկած հողամասերից, դեկտեմբերի 21-ին՝ արեւմուտքում մինչեւ Պողանտ ընկած տարածքներից: Դեկտեմբերի 21-ից յետոյ վերո-

51 Հայաստամը միջազգային դիւանագիտութեամ եւ սովորակամ արտաքին քաղաքականութեամ փաստաթ-դրում, Երևան, 1972, էջ 537-539:

նշեալ սահմաններից ներս գտնուող բոլոր թուրք զինուորները եւ սպանները գերուելու էին, իսկ զինքը եւ զինամթերքը բռնադրաւուելու էր<sup>52</sup>:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին թուրքական զօրքերը հեռացան Կիլիկիայից եւ ազատագրուած երկրամասը զբաղեցուեց Հայկական լեգէոնի կողմից: Հայկական այդ զօրամասի պաշտպանութեան ներքոյ Կիլիկիա վերադարձան ցեղասպանութիւնից մազապուրծ եղած տասնեակ հազարաւոր հայ տարագիրներ:

Հոկտեմբերի 24-ին Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանտոն պահանջեց բրիտանական իշխանութիւններից, որպէսզի Ալեքսանդրետի գրաւումը կատարուի միայն ֆրանսիական եւ Հայկական ստորաբաժանումների միջոցով, քանի որ այդ նաւահանգիստը առանձնայատուկ կարեւորութիւն ունէր Ֆրանսիայի համար<sup>53</sup>: Նոյեմբերի 10-ին ֆրանսիական նաւատորմը գրաւեց Ալեքսանդրետը<sup>54</sup>:

Նոյեմբերի 5-ին Ժ. Կլեմանտոն գաղտնի հրահանգ ուղարկեց դը Պիեպապին, որպէսզի Տաւրոսը ռազմակալուի Արեւելեան լեգէոնի ուժերով եւ առաջարկեց այդ ուղղութեամբ քայլեր կատարել գեներալ Է. Ալենբրիի համաձայնութիւնը ստանալու համար: Վարչապետը չէր ցանկանում կառավարական մակարդակով միջամտել, քանի որ ռազմական գործողութիւնների պատասխանատուութիւնը է. Ալենբրիի վրայ էին դրուած եւ դա կարող էր նրա արժանապատուութիւնը վիրաւորել եւ հակառակ ազդեցութիւնն ունենալ<sup>55</sup>:

Նոյեմբերի 15-ին գեներալ Համըլենը ռազմական նախարարութեանը տեղեկացրեց, որ պատրաստում է Հայկական լեգէոնը տեղափոխել Կիլիկիա՝ Ալեքսանդրետի վրայով Թօփրակ Կալէ, Աղանա եւ Տաւրոսի լեռներ<sup>56</sup>:

Նոյեմբերի 21-ին Հայկական լեգէոնի Ա գումարտակի երկու վաշտերը «Սևն Պրիւ» նաւով թէյրութից ուղարկուեցին Ալեքսանդրետ: Յաջորդ օրը կէսօրին նրանք մտան քաղաք: Ա գումարտակի մնացած լեգէոնականները «Լաւուազիէ» ռազմանա-

52 ՊՕՅԱՃԵԱՆ Տ., Աշւ. աշխ., էջ 173:

53 ՊԵՑԼԵՐԵՆԱՆ Ա., նշվ. աշխ., հ. II, էջ 402:

54 ԳԻՒՐՔՃԵԱՆ Վ., Հայկական Կիլիկիա, նիւ Նորք, 1919, էջ 5:

55 ՊԵՑԼԵՐԵՆԱՆ Ա., նշվ. աշխ., հ. II, էջ 422-423:

56 ՊՕՅԱՃԵԱՆ Տ., Աշւ. աշխ., էջ 178:

ւով Ալեքսանդրետ ժամանեցին յաջորդ շաբաթ։ Հայ զինուորների մուտքը քաղաք մեծ տպաւորութիւն թողեց թուրքերի վրայ։ Քաղաքի բոլոր ռազմավարական կէտերի պահպանութիւնը, որը գտնուում էր նոյեմբերի 14-ին Ալեքսանդրետ ժամանած ալժիրեան զօրախմբի հսկողութեան տակ, յանձնեցին Հայկական լեգէոնին։ Քաղաքում կարգը հաստատելուց յետոյ լեգէոնի Ա գումարտակը հրաման ստացաւ շարժուելու հիւսիս՝ դէպի Դեօրթ Եօլ (Չոք Մարզուան)։ Դեկտեմբերի 10-ին լեգէոնականները մեկնեցին Պայաս, իսկ յաջորդ երեկոյ հասան Դեօրթ Եօլ։ Գիւղաքաղաքում մնացել էին միայն թուրք գաւառապետը եւ ոստիկանապետը՝ մի քանի ոստիկաններով։ Նրանք աւանը Հայկական լեգէոնին յանձնեցին եւ գիւղերով հեռացան դէպի Աղանա։ Հայ զինուորների ներկայութիւնից քաջալերուած՝ Հայ գաղթականները սկսեցին վերադառնալ Դեօրթ Եօլ, որը կարճ ժամանակում կրկին վերածուեց Հայկական կենտրոնի։ Հայկական լեգէոնի Ա գումարտակը մի քանի օրից հրաման ստացաւ զբաղեցնելու իսլամիէ կայարանը<sup>57</sup>։ Դեկտեմբերի 7-ին Հայ զինուորների վերահսկողութեան տակ անցաւ Անտիոքը, դեկտեմբերի 23-ին՝ Օսմանիէն եւ իսլամիէն<sup>58</sup>։

Թուրքական բանակը հեռանալուց առաջ հսկայական քանակութեամբ զէնք ու զինամթերք էր բաժանել մահմեդական բընակչութեանը, որը, որոշ դէպքերում, փորձում էր զինուած դիմադրութիւն ցոյց տալ Փրանս-բրիտանական ուժերին։ Նոյեմբերի 30-ին Ալեքսանդրետում, իսկ դեկտեմբերի 12-ին Բէյլանում Ա գումարտակի Հայ զինուորները բախում ունեցան թուրքերի հետ, սակայն արագօրէն ճնշեցին նրանց զինուած ընդվզումները<sup>60</sup>։

Սակայն պէտք է նշել, որ սկզբնական շրջանում թուրքերի զինուած ելոյթները հազուադէպ էին եւ միայն հետագայում, օգտուելով դաշնակիցների թողարկութիւնից, դրանք ստացան մեծ ծաւալներ։ Տ. Պօյաճեանը հետեւեալ կերպ է նկարագրում իրավիճակը. «Հայ Լեգէոնականներու կողմէ Կիլիկիոյ գրաւման առաջին օրերուն բուրքերը բալորովին յուսալքուած էին։ Քաշուած իրենց

57 Նոյն տեղում, էջ 178-179։

58 ԳՈՒՇԱԳՑԵԱՆ Մ., Մուսա լերամ հայկական գաղթօնախը 1875-1939, Պէյրութ, 1988, էջ 147։

59 [http://en.wikipedia.org/wiki/Chronology\\_of\\_the\\_Turkish\\_War\\_of\\_Independence](http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence)

60 ՊՕՑԱԶԵԱՆ Տ., Աշ. աշխ., էջ 191։

տուներուն մէջ անոնք օրէ օր կը սպասէին իրենց գործած ահաւոր ռնիրներու փոխհատուցման: Կարծես տրամադիր էին ենթարկուելու որեւէ պատժի, եւ պատրաստ էին իրենց գէները կամաւոր կերպով յանձնել առանց ամենափռք գանգատի, եթէ զինուորական իշխանութիւնները այդպէս կամենային: Դժբախտաբար իրաց այս նպաստաւոր վիճակը երկար չի տեսեց, դիւանագիտական շահախնդրութեանց շնորհի: Տակաւ առ տակաւ ֆրանսացի բարձրաստիճան զինուորականները բուրքներու հանդէպ բարեացակամութեան տրամադրութիւններցոյց տուին, ի մեծ զարմանու եւ ի վնաս տառապակոծ հայ ժողովուրդին: Ծանօթ շարդարարներ այլեւս չէին հետապնդուիր: Քաջալերուած այս նպաստաւոր կացութենէն բուրքները սկսան աւելի համարակ ու ամբարտաւան դառնալ: Այլեւս յառակ էր իրենց համար որ երեկուան իրենց թշնամին հաշտ աչքով սկսած էր նայի իրենց վրայ: Ուստի, անոնք ամէն միջոցի դիմեցին զարգացմելու իրենց ի նպաստ եղած դիմափոխութիւնը: Սարքնեցին պարահանդէսներ, ճաշասեղաններ, եւ մեծարանների ամէն ձեւի հիւրասիրութիւններ սիրաշահելու համար ֆրանսացի մեծ ու փոքր պաշտօնեաները»<sup>61</sup>:

**Դեկտեմբերի 16-ին Բ եւ Գ գումարտակները Բէյրութից բրիտանական «Կամպետուա» եւ «Նեկատէրինուլա» նաւերով մեկնեցին Մերսին: Առաջինը անմիջապէս Մերսին էր գնալու, իսկ երկրորդը՝ Ալեքսանդրետ, ապա նոր՝ Մերսին<sup>62</sup>:**

**Դեկտեմբերի 17-ի երեկոյեան «Կամպետուա» նաւը մօտեցաւ Մերսինին, սակայն փոթորկի պատճառով լեգէոնականները ափ դուրս գալ չկարողացան: Միայն մի նաւակ կարողացաւ հասնել ափ:** Դեկտեմբերի 18-ի առաւօտեան հայ զինուորները ոտք դրեցին կիլիկեան հողի վրայ: Լեգէոնական Մանուկ Բաղդասարեանը (Խան) հետեւեալ կերպ է բնութագրում այդ իրադարձութիւնը: «Հայ Կամաւորները ծնրադիր հայրենի կոյս եւ միանգամայն սրբազն հողը կը համբուրէին կարօտակէզ արցունեֆի կայլակներ հոսեցնելով իրենց աչքներէն: Հայրենի հողին անդիմադրելի սիրոյն եւ կարօտին ազդէցուրեան տակ հայ կամաւորներս գրեթէ զգայագիրկ զինովութեան նոպաներ անցուցինք: Այդ վայրկեանէն արմատապէս համոզուեցանք որ իսկապէս հարազատ հայրենի հողին մագնիսական ոյժը այնպիսի վիրխարի զօրութիւն մըն է զոր այդ հողին վրայ կանգնող հաւատաւոր հայրենսէրը միայն կը զգայ»<sup>63</sup>:

61 Նոյն տեղում, էջ 191-192:

62 Նոյն տեղում, էջ 178:

63 Նոյն տեղում, էջ 181:

Նաւահանգստում հայ զինորներին դիմաւորելու համար հաւաքուել էին եղեռնից փրկուած հայ կանայք ու երեխաներ: Տ. Պօյաճեանը նկարագրում է, թէ ինչպէս է ցնցոտիաւոր մի ծեր հայ կին՝ երեխայի հետ, մօտեցել իրեն, համբուրել ձեռքը եւ դողդոջուն ու հազիւ լսելի ձայնով ասել. «Բարի եկաֆ, զաւակներըս, ձեր հոգիին մատաղ: Բայց, ուշ եկաֆ: Ամայութիւն տեսնելու եկաֆ: Մեր ժողովուրդին խաչելութեան ապացոյցները փնտոելու եկաֆ: Սակայն բարի եկաֆ: Ողջ մեացածներս մեր մաշած բազուկներուն եւ քօշնած սրտերուն մէջ տեղ կու տանք ձեզի, ձեզմով վերակենանանալու եւ յուսադրուելու»<sup>64</sup>:

**Մարտիրոս Գուշագճեանը գրում է.** «Հայ լեգենականները Կիլիկիա կու գան այն յօյսով ու հաւատքով, որ հայկական Կիլիկիոյ անկախութիւնը կերտելու ու պահպանելու կու գան»<sup>65</sup>: Հայ զինուորները, հայրենի հողի վրայ կանգնելու ուրախութեան հետ միասին, ականատես եղան եղեռնի հետեւանքով հայաթափուած հայրենիքի տիսուր պատկերին, գողդոթայից փրկուած ցնցոտիաւոր կանանց ու մանուկների ողբալի վիճակին: Ակզբանական երջանկութեան զգացումին հետզհետէ սկսեց փոխարինել դառնութիւնը:

**Շուտով Դ գումարտակն ուղարկուեց Ալեքսանդրետ, իսկ Ագումարտակը շարժուեց աւելի հիւսիս»<sup>66</sup>: Դ գումարտակը Բէյրութից Ալեքսանդրետ տեղափոխուեց բրիտանական «Թակուս» նաւով<sup>67</sup>:**

**Գ գումարտակի Հ-րդ վաշտը եւ գնդացրորդների վաշտը մնացին Մերսինում, իսկ լեգէոնի միւս մասը գնացքով դեկտեմբերի 20-ին մեկնեց Տարսոն եւ Ադանա<sup>68</sup>: Նոյն օրը Կիլիկիայի այդ երկու գլխաւոր կենտրոնները անցան հայկական զինուժի հսկողութեան տակ: Դեկտեմբերի 25-ին Ադանա ժամանեց Լ. Ռոմիոն<sup>69</sup>:**

Տարսոնի հայերը մեծ խանդավառութեամբ դիմաւորեցին ժամանող հայ զինուորներին: Գնացքը դեռ չկանգնած, տեղի հա-

64 Նոյն տեղում, էջ 182:

65 ԳՈՒՇԱԳՃԵԱՆ Մ., Աշւ. աշխ., էջ 145:

66 ԼԱԶԵԱՆ Գ., Հայաստան եւ Հայ Դատը: Հայ եւ ոռւս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիքը, 1957, էջ 192:

67 ՊՕՑԱԶԵԱՆ Տ., Աշւ. աշխ., էջ 178:

68 ՊԱՐԹԵԿԵԱՆ Ա., Կիլիկիոյ մօտաւոր ամցեալէմ (Պատմական ակնարկ),

Առաջարան եւ Աօթեր Մ.Ա. Դաւիթ-Բէկի, Փարիզ, 1937, էջ 10:

յերը նետւում էին ողջագուրուելու լեզչոնականների հետ։ Կայարանում անընդհատ հնչում էին հայկական երգեր։ Տարսոնում թողնելով 2 վաշտ, լեզչոնը շարունակեց ճանապարհը դէպի Ադանա<sup>70</sup>։

Տարսոն մտնելուց հետո Փրանսիական հրամանատարութիւնը յայտարարեց, որ Հայկական լեզչոնի զինուորների թիւը 12.000-ի է հասցուելու եւ հնարաւոր է, որ ազատագրուի նաեւ Սեբաստիան<sup>71</sup>։ Դա մեծ խանդավառութիւն առաջացրեց հայ զինուորների մօտ։

Աղանայում հայ բնակչութիւնը ցնծութեամբ դիմաւորնց լեզչոնականների մուտքը քաղաք։ Աղանայի երկաթուղային կայարանում լեզչոնականներին դիմաւորեցին սպիտակ շորերով, եռագոյններով զարդարուած հայ աղջիկներ, որը չափազանց ոգեւորիչ էր հայ զինուորների համար։ Հայ համայնքի ներկայացուցիչները ողջոյնի խօսքերով դիմաւորեցին Փրանսիական իշխանութիւններին եւ հայ լեզչոնականներին<sup>72</sup>։

«Ամէն կողմէ ծաղիկներ կը տեղային, հուուա՛ները իրար կը յաջորդէին, լաց կար ու խինդ, գիրկընդխառնում եւ ողջագուրում, վկայում է ականատես լեզէննական Մ. Թաթարեանը, - Զէին հաւատար կատարուած հրաշքը. հայ զինուոր, կատարեալ զինուոր, զէնք ու զրահով, անվախ ու քաջ, Ռուրեններու եւ Լեւններու երկրին Վրայ ուսք կը դնէր, դարերու գերութեան շրթան կը փշրէր....»<sup>73</sup>։

Երեկոյեան հայ լեզչոնականները հիւրընկալուեցին Սարգիս Ճանճիկեանի ռեստորանում, ուր հաւաքուել էին եղեռնից փրկուած հայերը։ Ճոխ խնջոյք կազմակերպուեց։ Մի ծերունի հետեւեալ խօսքով դիմեց զինուորներին։ «Զաւակներս, դուք էք մեր կոտորակուած եւ յուսակտուր եղած ժողովուրդին միակ յոյսն ու ապաւենք։ Գիտէք թէ ինչ ահաւոր տանջանքներ կրեց ան։ Այս փոքրիկ նաշասրահն անգամ անխօս վկան է զարհուրելի խժդութեանց։ Մեր ցեղին նահատակները, որոնց թիւը միլիոնը անցած է, ձեզի կը նային իրենց անձանօք հողաքումբերէն։ Դուք էք որ ձեր գործեռվ հանգստութիւն եւ խաղաղութիւն պիտի պարգևնէք անոնց տառապած հոգիներուն։ Վերածնող հայրենիքի պաշտպանն ու պա-

70 ՊԱՐԹԵԻԵԱՆ Ս., նշ. աշխ., էջ 110։

71 ՊՕՅԱՃԵԱՆ Տ., նշ. աշխ., էջ 204։

72 Նոյն տեղում, էջ 182։

73 ԹԱԹԱՐԵԱՆ Մ., նշ. աշխ., էջ 21։

հապանն էք դուք: Հաւատարիմ եղեք ձեր կոչումին եւ հայ ժողովուրդի իտեալին՝ որ ձեր իտեալն է: Թող Հայուն Աստուածը ձեզի պարգևեւ անսահման ուժ, բաջուրիւն, կորով ու տոկունուրիւն: Կրկնեմ, խմենք Վերածնող Հայրենիքին կենացը»<sup>74</sup>:

**Կիլիկիայի ազատագրումը,** ինչպէս տեսանք, կատարուեց հիմնականում Հայկական լեգէոնի ուժերով: Ա գումարտակի վերահսկողութեան տակ յայտնուեց Կիլիկիայի արեւելքը՝ Բէյլանը, Պայասը, Դեօրթ Եօլը, Անտիոքը, Թօփրակ Կալեն, Օսմանիէն, Բաղչէն, Խոլահիէն: Բ գումարտակը ազատագրեց կենտրոնական շրջանները՝ 4-րդ վաշտը մասց Աղանայում, իսկ 5-րդ եւ 6-րդ վաշտերը զբաղեցրին Սիհուն եւ Զիհան գետերի միջագետքում գտնուող կարեւոր ռազմավարական կէտերը: Գ գումարտակը զբաղեցրեց Կիլիկիայի արեւմտեան մասը՝ Մերսինը, Տարսոնը, Ենիձէն, Պողանտը<sup>75</sup>: Դ գումարտակը հաստատուեց Ալեքսանդրետում եւ շրջակայքում<sup>76</sup>:

1918 թ. դեկտեմբերի 6-ին բրիտանական զօրքերը Սիրիայից մտան Քիլիս, 1919 թ. յունուարի 15-ին բրիտանական զօրքերն ազատագրեցին Այնթապը, փետրուարի 2-ին՝ Մարաշը, փետրուարի 27-ին՝ Բիրեջիկը, մարտի 24-ին՝ Ուրֆան: Ֆրանսիական զօրքերը բրիտանականին փոխարինեցին 1919 թ. հոկտեմբերի 29-ին Մարաշում, իսկ 30-ին՝ Ուրֆայում<sup>77</sup>:

Կիլիկիան ազատագրելուց յետոյ այնտեղի երկաթուղային կայարանները գտնւում էին հայ լեգէոնականների վերահսկողութեան տակ: Նրանք կարողացան բազմաթիւ հայ կանանց ազատել թուրքերի ձեռքից Հալէպից Կ. Պոլիս գնացող գնացքների միջից<sup>78</sup>:

Ենիձէ կայարանի հեռագրատան տնօրէնը մի բարեացակամ թուրք էր, որի տանն էր գտնւում 8-10 տարեկան մի գեղեցիկ հայ աղջնակ: Լեգէոնականներից երուանդ թիւրպեանը եւ Ենովք Աշտարակենցը յաճախ էին հիւրընկալուում այդ թուրքի տանը: Շուտով նրանք տեղեկացան, որ աղջիկը հայ է եւ այդ մասին հարցրին թուրքին: Վերջինս ոչ միայն պատրաստակամութիւն

74 ՊՕՅԱՀԵԱՆ Տ., Աշւ. աշխ., էջ 185:

75 Նոյն տեղում, էջ 199-200:

76 Նոյն տեղում, էջ 193:

77 [http://en.wikipedia.org/wiki/Chronology\\_of\\_the\\_Turkish\\_War\\_of\\_Independence](http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence)

78 ՊՕՅԱՀԵԱՆ Տ., Աշւ. աշխ., էջ 202:

յայտնեց աղջկան վերադարձնել, այլ նաև՝ նրա հետ դրեց Յ ոսկի, Յ ձեռք հագուստ եւ այլ պարագաներ։ Հայ զինուորները աղջկան ուղարկեցին Աղանայի որբանոց<sup>79</sup>։

1918 թ. դեկտեմբերին Հալէպում Հայ ազգային միութեան կազմակերպած երեկոյթում բրիտանացի գործիչ Մարկ Սայքսը հետեւեալ խորհուրդը տուեց հայերին. «Եթէ դուք հայերդ, ըստ, ձեր սեփական ուժերով Կիլիկիոյ գրաւումը, որպէս կատարուած իրողութիւն, դաշնակիցներուն առջեւ չի դնեմ, մի սպասէմ որ անոնք այդ երկիրը ձեզ պիտի քողուն»<sup>80</sup>։

Սակայն մինչեւ վերջնական յուսախաբութիւն ապրելը հայերը չհամարձակուեցին սեփական ուժի վրայ յենուած գործողութիւնների գնալ այն ժամանակ, երբ Կիլիկիայում գտնուող միակ զինուժը Հայկական լեգէոնն էր եւ սպասում էին, որ մեծ տէրութիւնները իրենց փոխարէն լուծեն հայ ժողովրդին յուզող հարցերը։

Դեկտեմբերի 25-ին գնդապետ Է. Բրեմոնը նշանակուեց «Հայաստանի եւ Կիլիկիայի կառավարիչ»։ Սակայն 1919 թ. յունուարի 19-ին նրա պաշտօնը վերանուանուեց «Գրաւուած թշնամի հողամասերի հիւսիսային գոտիի գլխաւոր կառավարիչ»։ Այդ շրջանում Կիլիկիան, Սիրիան, Լիբանանը եւ Պաղեստինը բաժանուել էին 4 օկուպացիոն գոտիների։ Կիլիկիան՝ Աղանա կենտրոնով, հիւսիսային գոտին էր։ Արեւմտեան գոտու կենտրոնը Բէյրութն էր, կառավարիչը Քօփէն, արեւելեանի կենտրոնը Դամասկոսն էր, կառավարիչը Ալի Ռիզա փաշան, որը թուրքերի նահանջի ժամանակ բրիտանացիների կողմն էր անցել, իսկ հարաւային գոտու կենտրոնը Երուսաղէմն էր, կառավարիչը բրիտանացի գեներալ Մոնին։<sup>81</sup>

Աղանայի նահանգում պահպանուեց թուրքական 3.000-ոց ժամանակակից ժամանակակից պատմութեան համար։ Իմ պատրուակով Կիլիկիան կրկին թուրքերում տրուեցաւ, «Պայքար» նոր տարւոյ բացառիկ, Բուտօն, 1950, էջ 81։

79 Նոյն տեղում, էջ 201։

80 ՆԱԹԱՆԵԼՈՆ Մ., Նիւթեր ժամանակակից պատմութեան համար։ Իմ պատրուակով Կիլիկիան կրկին թուրքերում տրուեցաւ, «Պայքար» նոր տարւոյ բացառիկ, Բուտօն, 1950, էջ 81։

81 ՊՕՅԱՆԱՑԵԱՆ Տ., Յշտ. աշխ., էջ 199։

82 ՀԱԱԿՅԱ Բ., Ֆրանկո-ուրեցիկ գործութեան և Կոլուկա 1918-1923 շ. Երևան, 1986, էջ 84։

նած էր Հայկական լեգէոնը, որի խնդիրն էր ապահովել հայ բնակչութեան անվտանգութիւնը, ճնշել բաւական լաւ զինուած մահմեդական բնակչութեան յուղումները:

Փաստօրէն, Հայկական լեգէոնը կարեւոր դերակատարութիւն ունեցաւ Պաղեստինեան ճակատում թուրքական բանակի ջախջախման գործում: Հայկական զինուժը մասնակցեց թուրքական բանակի մնացորդների հետապնդմանը, Պաղեստինի, Լիբանանի ազատագրմանը: Մուգրոսի զինադադարից յետոյ հիմնականում Հայկական լեգէոնի ուժերով ազատագրուեց ամբողջ Կիլիկիան: Որոշ վայրերում դիմադրութիւն ցոյց տալու թուրքական զինուժի փորձերը ձախողուեցին Հայկական զօրամասի վճռական գործողութիւնների արդիւնքում: Լեգէոնը աջակցեց ցեղասպանութիւնից փրկուած հայ գաղթականների մնացորդների անվտանգ վերադարձին Կիլիկիայի իրենց օջախները:

Հայկական լեգէոնը հասաւ իր գլխաւոր նպատակին՝ Կիլիկիայի ազատագրմանը, սակայն հետագայում Փրանսիական իշխանութիւնները դրժեցին հայերին Կիլիկիայում ինքնավարութիւն տալու նախկին խոստումները եւ 1921 թ. այդ հայկական երկրամասը յանձնեցին թուրքերին, իսկ տեղի հայերը ստիպուած էին կոտորածից խուսափել՝ գաղթելով Սիրիա եւ Լիբանան:

ՍԱՄՈՒԷԼ ՊՈՂՈՍԵԱՆ

**Summary****THE ARMENIAN LEGION'S ENTRANCE  
TO LEBANON AND CILICIA  
(1918)****SAMVEL POGHOSYAN**

The Armenian Legion took part in destroying of Turkish army and chased its remnants in the Palestine front. It participated in liberation of Palestine and Lebanon. After the Mudros armistice mainly by the Armenian Legion's efforts the Cilicia was liberated. In some places the attempts of turks to resist failed as a result of the Armenian unit's decisive actions. The Legion supported the remnants of Armenian refugees surviving from genocide for safely return to their homes in Cilicia.